ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Էքսպեր. և կլինիկ. բժշկ. հանդես

II, № 4, 1962

Журн. экспер. и клинич. медицины

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ

(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Հուլիսի 7-ին լրանում է մեր երկրի ակնավոր գիտնական, համաշխարհային ֆիզիոլոգիական գիտության խոշոր ներկայացուցիչ ակադեմիկոս Լևոն Աբգարի Օրբելու ծննդյան 80 տարին։ Լ. Ա. Օրբելու անունը հայտնի է ոչ միայն գիտական շրջաններին, այլև մեր հայրենիքի ժողովրդական լայն մասսաներին։

Դեռ ուսանողական տարիներին Լ. Ա. Օրբելին հաստատապես որոշեց աշխատել Իվան Պետրովիչ Պավլովի մոտ, որի վեհությունն անջնջելի ազդեցություն էր գործում Ռազմա-բժշկական Ակադեմիայի երիտասարդ ունկնդիրների վրա։ Լ. Ա. Օրբելին իր բախտը անքակտելիորեն կապում է Ի. Պ. Պավլովի բախտի հետ և Ռազմա-բժշկական Ակադեմիան ավարտելուց հետո՝ 1904 թ. նա դառնում է իր հանճարեղ ուսուցչի աշխատակիցը և ամենամերձավոր օգնականը։

Գիտական գործունեությունը Լ. Ա. Օրբելին սկսեց այն տարիներին, երբ մեծ Պավլովի լաբորատորիաների հեղափոխական վաղքը նախագուշակում էր ռուսական ֆիզիոլոգիական գիտության աննախընթաց ծաղկում։ Այստեղ՝ Ի. Պ. Պավլովի լաբորատորիաներում՝ խմորվում է նրա միտքը, որով հետագայում որոշվում է նրա ստեղծագործական որոնումների ամբողջ ուղին։ Լ. Ա. Օրբելին հանդիսանում է Ի. Պ. Պավլովի հետևողական աշակերտը։ Նրա ամբողջ գիտական գործունեությունը ներկայացնում է հանճարեղ ֆիզիոլոգի բազմակողմանի գիտական ժառանգության հետագա ստեղծագործական զարգացումը։

Լ. Ա. Օրբելու կարևորագույն հայտնագործություններից մեկը—սիմպատիկ ներվային սիստեմի ադապտացիոն-տրոֆիկ դերի մասին ուսմունքը, որն ընդհանուր ճանաչում է գտել և հայրենական ֆիզիոլոգիայի ներդրումներից է համաշխարհային գիտության մեջ, իր արմատներով սերտորեն կապված է տրոֆիկ ներվավորման մասին Ի. Պ. Պավլովի ուսմունքի հետ։

Այդ հայտնագործության պատմության համար բնորոշ եղավ աշխատանքի հատուկ ոճը՝ մինչև սիմպատիկ ներվային սիստեմի ֆիզիոլոգիայի մշակումն սկսելը, Լ. Ա. Օրբելին իր ուսմունքը հիմնավորեց տեսականորեն։ Լաբորատորիայում ստացված հենց առաջին փաստերը հաստատեցին նրա հայացքները, իսկ հետագա փորձերը հարստացրին սկզբնական տեսությունը, որի հետևանքով ծագեց սիմպատիկ ներվային սիստեմի ունիվերսալ ադապտացիոն-տրոֆիկ դերի մասին ուսմունքը։ Այդ ուսմունքն ընդգրկում է հսկայական թվով փաստեր, որոնք վերաբերվում են կմախքային մկանի, կենտրոնական ներվային սիստեմի, ռեցեպտորների և այլ օրգանների վրա սիմպատիկ ներվային սիստեմի ազդեցության տարբեր կողմերին։

Բնական տաղանդից բացի, որով օժտված էր Լ. Ա. Օրբելին, պրոբլեմի լայն ընդգրկումը հնարավոր եղավ համաշխարհային ֆիզիոլոգիական գիտության նվաճումներին քաջգիտակ լինելու շնորհիվ։

Լ. Ա. Օրբելին պատկանում է ֆիզիոլոգների հին դպրոցի այն փայլուն

համաստեղությանը, որոնք աչքի էին ընկնում ֆիզիոլոգիայի հիմնական բոլոր բաժիններն ընդգրկող գիտելիքների էնցիկլոպեդիական ծավալով։

Օժտված լինելով գիտելիքների բացառիկ լայնությամբ, Լ. Ա. Օրբելին իր լաբորատորիաներում մշակում է ֆիզիոլոգիայի տարբեր պրոբլեմներ։ Բայց նրա աշխատանքների ուղղություններից մեկը աչքի է ընկնում իր հատուկ նշանակությամբ։ Խոսքը էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի մասին է, որը կապված է Լ. Ա. Օրբելու անվան հետ։

Ֆունկցիաների էվոլյուցիայի հարցերը Լ. Ա. Օրբելին սկսեց մշակել գրեթե սիմպատիկ ներվային սիստեմի ֆիզիոլոգիայի հետ միասին։ Առաջին հերթին նրանք վերաբերվում էին շարժողական ապարատի էվոլյուցիային։ Այդ ուսումնասիրությունները բազմամյա փորձերի նպատակասլացության և խիստ տրամաբանականության փայլուն օրինակ հանդիսացան։

Լ. Ա. Օրբելու բազմաթիվ աշխատակիցների կողմից ստացված փաստերը թույլ տվեցին նրան ձևակերպելու էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնական օրինաչափություններից մեկը, որն ունի համակենսաբանական նշանակություն. կենդանական օրգանիզմի պատմական և օնտոգենետիկ զարգացման պրոցեսում նոր ֆունկցիոնալ հարաբերությունները կառուցվում են հների բազայի վրա, «շերտապատում» են նրանց։ Ընդ որում, որոշ պայմաններում՝ մասնավորապես փորձի ժամանակ, կամ պաթոլոգիկ դրության զարգացման դեպքում՝ այդ «հին» ֆունկցիոնալ հարաբերությունները կարող են նորից ի հայտ գալ կամ անգամ դառնալ գործունեության գերիշխող ձևեր։ Այդ ընդհանրացումն ամբողջովին ներդաշնակում է Ի. Պ. Պավլովի ժամանակավոր կապերի մասին ուսմունքին և արտացոլում է նրա հայացքները՝ ձևաբերովի հատկանիշների ժառանգաբար փոխանցման վերաբերյալ։

Լ. Ա. Օրբելու էվոլյուցիոն գաղափարները բարերար ազդեցություն ունեցան Սովետական Միությունում ֆիզիոլոգիական գիտության մեջ մի շարք ուղղությունների զարգացման վրա, մասնավորապես էմբրիոֆիզիոլոգիայի, հասակային ֆիզիոլոգիայի և այլն։

Փայլուն էքսպերիմենտատորի վարպետությունը նրա մոտ զուգակցվում էր խոր տեսական մտածողության հետ, և դա թույլ էր տալիս նրան փորձում նկատելու այն, ինչ վրիպում էր ուրիշների ուշադրությունից, և ընդհանրացնելու իր դիտողությունները պարզորոշ և հասկանալի դրույթներով։ Հարյուրավոր հետազոտողներ զբաղվել են մինչև Լ. Ա. Օրբելին ուղեղիկի ուսումնասիրությամբ, սակայն հետևությունները, որոնց նա հանգեց իր դիտողություններից ելնելով, արմատապես տարբերվում էին այն բոլորից, ինչ գոյություն ուներ ֆիզիոլոգիայի այդ բնագավառում։ Այսպես, Լ. Ա. Օրբելին ստեղծեց իր ուսմունքը ուղեղիկի ֆունկցիաների մասին, որով նա հաստատում էր սերտ փոխազդեցության առկայությունն ուղեղիկի և աֆերենտ սիստեմների ու սիմպատիկ ներվային սիստեմի միջև։ Ուղեղիկի ֆիզիոլոգիայի ամբողջ հետագա զարգացումը հանդիսացավ Լ. Ա. Օրբելու գաղափարների փայլուն ապացույցը։

Լ. Ա. Օրբելու մահից հետո վերը նշված պրոբլեմների մշակմանը մասնակից դարձավ նաև Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, որին շնորհվեց ականավոր ֆիզիոլոգի անունը։

Պետք է առանձնաբար նշվեն Լ. Ա. Օրբելու ծառայություններն ուղեղի գործունեության բարձրագույն արտահայտությունների ուսումնասիրման հարցերում ճիշտ դիրքավորումը պաշտպանելու գործում։ Չնայած անհիմն ու դաժան

քննադատությանը, որի հեղինակները՝ Ի. Պ. Պավլովի աշակերտներից ոմանք՝ իրենց համարում էին նրա ուսմունքի մոնոպոլ մեկնաբաններ, Լ. Ա. Օրբելին հաստատորեն կանգնած էր իր դիրքերում և անդադար կրկնում էր, որ ի տարբերություն կենդանիների՝ մարդու բարձրագույն ներվային գործունեության ուսումնասիրության դեպքում հետազոտողը բացի օբյեկտիվ տվյալներից պարտավոր է ի նկատի ունենալու նաև մարդու սուբյեկտիվ ցուցումները։

Ծավալով սահմանափակված հոդվածում դժվար է անգամ սեղմ կերպով անդրադառնալ այն բոլոր պրոբլեմներին և ուղղություններին, որոնք մշակվել են Լ. Ա. Օրբելու ղեկավարությամբ։ Բացի նշվածներից, նրա ուսումնասիրություններում նշանավոր տեղ են գրավում բարձրագույն ներվային գործունեության, զգայարանների, ֆիզիոլոգիական ցավի, ավիացիոն և ծովային ֆիզիոլոգիայի պրոբլեմները։

Աշխատանքի այս բոլոր բնագավառներում Լ. Ա. Օրբելին իր աշխատակիցների հետ միասին, բազմաթիվ փաստերից բացի, տվեց գիտությանը նոր, օրիգինալ դաղափարներ և ընդհանրացումներ, որոնք բնորոշվում են տեսական մտքի հստակությամբ, պարզությամբ և խորությամբ։

Լ. Ա. Օրբելին հսկայական ազդեցություն ունեցավ հայրենական ֆիզիոլոգիայի զարգացման վրա։ Բավական է հիշեցնել, որ էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի բազմակողմանի զարգացումը գնում է Լ. Ա. Օրբելու կողմից կանխագծված ուղիներով։ Նրա անվան հետ է կապված զգայարանների ֆիզիոլոգիայի զարգացումը։ Անգնահատելի ավանդ նա մուծեց Սովետական Բանակին, ավիացիային և նավատորմին հետաքրքրող ֆիզիոլոգիական պրոբլեմների ուսումնասիրության կազմակերպման գործում։

Սովետական հասարակայնությունը հանձինս Լ. Ա. Օրբելու մեծարում է ոչ միայն ականավոր գիտնականի և սովետական գիտության կազմակերպչի, այլև անխոնջ հասարակական գործչի, որը, հետևելով դեմոկրատ գիտնականների տրադիցիաներին, սիրով հաղորդում էր իր գիտելիքները ժողովրդական մասսաներին։

Լինելով խոշոր գիտական կոլեկտիվների ղեկավար և չնայած հսկայական աշխատանքին՝ իր աշակերտների և աշխատակիցների ղեկավարման և կոնսուլտացիայի գծով, Լ. Ա. Օրբելին միշտ ժամանակ էր գտնում ունկնդրելու տարբեր տեղերից և ռեսպուբլիկաներից իրեն խորհուրդը հայցող երիտասարդ գիտնականներին, կարդալու գիտա-պոպուլյար զեկուցումներ, շատ այլ հանդիպումների համար՝ բանվորների, ծառայողների, սովորողների և զինվորականների հետ։ Ըստ որում Լ. Ա. Օրբելու համար բնորոշն այն է, որ նա չէր սահմանազատվում սկսնակ, երիտասարդ աշխատակիցներից լաբորատորային խոշընդոտներով կամ վկայակոչելով իր ծանրաբեռնվածությունը։ Ի տարբերություն շատերի, Լ. Ա. Օրբելին միշտ իրազեկ էր իր բոլոր աշխատակիցների գործին, կրտսերներից սկսած վերջացրած ղեկավարներով, և միշտ ժամանակ էր գտնում նրանցից յուրաքանչյուրի հետ առանձին զրուցելու։ Այդ գործում նրան օգնում էր բացառիկ աշխատունակությունը, որը թվում է թե սահման չուներ։

Լ. Ա. Օրբելին հանդիսանում էր ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Փարիզի կենսաբանական ընկերության թղթակից-անդամ, Բնախույզների համագերմանական Լեոպոլդինո-Կարոլինյան ակադեմիայի անդամ, Մեծ Բրիտանիայի

ֆիզիոլոգների ընկերության անդամ։ Նշված գիտական կազմակերպություններում նրան ընտրելը հանդիսանում էր Լ. Ա. Օրբելու համաշխարհային գիտությանը մատուցած ծառայությունների արտահայտությունը։

Հայրենիքին և գիտությանը մատուցած ծառայությունների համար ակադեմիկոս Լ. Ա. Օրբելին Կառավարության կողմից արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչմանը, պարգևատրվել է Լենինի չորս շքանշաններով, Կարմիր Դրոշ շքանշանով, Աշխատանքային Կարմիր Դրոշ շքանշանով, Կարմիր Աստղ շքանշանով և մեդալներով։

Լ. Ա. Օրբելին մասնակցել է Հայաստանի 25-ամյակին նվիրված տոնակատարությանը։ Նա միշտ սիրով էր հիշում Հայաստանը և շատ անգամ է ցանկություն հայտնել նորից այցելելու Հայաստան։ Իր կյանքի մայրամուտին, երբ ծանր հիվանդությունը գամել էր նրան անկողնուն, Հայաստանի մասին խոսելիս նա հաճախ կրկնել է—երբ առողջանամ անպայման մեկնելու եմ Հայաստան։ Ցավոք սրտի, Լևոն Աբգարիչի այդ իղձը չիրագործվեց։